# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Նորին Սրբություն Ալեքսի Բ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքին՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միության վերահաստատման և մայիսի 17-ին Մոսկվայի Ս. Ամենափրկիչ Մայր տաճարում Մոսկվայի Պատրիարքության և Արտասահմանի Ռուս Եկեղեցու միջև միավորման հռչակագրի ստորագրման առիթով:

«*Այս իրադարձությունը կարևոր նշանակություն ունի ինչպես Ռուս Ուղղափառ Եկեղեցու, այնպես էլ Քրիստոսի ողջ Եկեղեցու համար: Եկեղեցական այս միությունը հիրավի արտահայտությունն է մեր եղբայրական ռուս ժողովրդի միասնականության, նրա կամքի և ձգտումների գիտակից համախմբման՝ ի բարօրություն Ռուս Ուղղափառ Եկեղեցու և Հայրենիքի*»,- ասված է Հայրապետական ուղերձում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*